



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 1425/02//2009թ.  
Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան  
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան  
Ն.Գրիգորյան

Քաղաքացիական գործ թիվ 1425/02//2009թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք. Ստեփանակերտ

06 օգոստոսի 2010թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով

Նախագահությամբ դատավոր՝  
Մասնակցությամբ դատավորներ

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ  
Կ.ՂԱՐԱՅԱՆԻ  
Զ.ՕՅԱՆՅԱՆԻ

դոմբաց դատական նիստում քննության առնելով Ա.Գրիգորյանի վճռաբեկ բողոքը ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. հունիսի 07-ի որոշման դեմ՝ ըստ հայցի Արայիկ Արսյումի Գրիգորյանի ընդդեմ Արմեն Կամոյի Ղալայանի՝ 894.000 ՀՀ դրամ հասցրած վնասը բռնագանձելու պահանջի մասին,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1.Գործի դատավարական նախապատմությունը.**

Դիմելով դատարան՝ հայցվոր Ա.Գրիգորյանը խնդրել է բռնագանձել պատասխանող Ա.Ղալայանից 894.000 ՀՀ դրամ՝ որպես իրեն հասցրած վնասի գումար:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 16.4.2010թ. վճռով հայցը բավարարվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. հունիսի 07-ի որոշմամբ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 16.4.2010թ. վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշման դեմ 06.7.2010թ. դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով վճռաբեկ բողոք է բերել Ա.Գրիգորյանը :

ԼՂՀ Գերագույն դատարանի 22.7.2010թ. որոշմամբ վճռաբեկ բողոքը ընդունվել է դատարանի վարույթ:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

## **2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոնշյալ հիմնավորումներով.

ԼՂՀ վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, 229-րդ հոդվածի 3-րդ կետը:

Բողոք բերած անձը նշված պնդումները հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշման համաձայն, առաջին ատյանի դատարանի վճռի բեկանման հիմք է հանդիսացել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջների խախտումները՝ «Դատարանը, հիմք ընդունելով միայն փորձագետի եզրակացության հետևությունների չորրորդ կետի 1-ին և 5-րդ կետի տարբերությունները, համապատասխան գնահատական չի տվել մնացած կետերին և տարբերություններին, պատճառաբանելով, որ պատասխանող Ա.Ղալայանի դատաքննության ընթացքում տված ցուցմունքները մտացածին են, չեն բխում գործի նյութերից և նման դիրքորոշում ընտրելը հետապնդում է նրա կողմից պատասխանատվությունից խուսափելու նպատակ: Այնինչ, Դատարանը, հիմք ընդունելով միայն հայցվորի կողմից դատաքննության ընթացքում տված ցուցմունքով «15 վայրկյան»-ի վրա հիմնված փորձագետի եզրակացության հետևությունների մասին համապատասխան կետերը, գնահատական չի տվել եզրակացության մնացած կետերին:

Դատարանը գնահատական չի տվել և ապացույցները գնահատելիս ուշադրություն չի դարձրել այն կարևոր հանգամանքի վրա, որ ԼՂՀ ոստիկանության ՃՈ եզրակացության համաձայն՝ «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 ՔՈ 006 պետհամարանիշի ավտոմեքենայի վարորդ, գործով պատասխանող Ա.Ղալայանը կատարել է ՃԵԿ-ի տարբեր կետերի, մասնավորապես՝ 62-րդ և 67-րդ կետերի խախտումներ, որոնք իրարից սկզբունքային տարբերվող խախտումներ են»:

Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումը բողոքաբերը համարում է սխալ ու գտնում է, որ առաջին ատյանի դատարանը, հետազոտելով գործի բոլոր հանգամանքները՝ նրանց համակցությամբ, տվել է համապատասխան գնահատական, ինչպես պատասխանողի դիրքորոշմանը, այնպես էլ նաև դատարանում պատասխանող Ա.Ղալայանի տված բացատրության վրա հիմնված փորձագետի եզրակացության մնացած կետերին, ինչը մանրամասնորեն պատճառաբանվել է վճռում: Հետևապես, առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չեն տրվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջների որևէ խախտումներ և վերաքննիչ դատարանի վկայակոչումը դրա մասին հիմնավոր չէ:

Բողոքաբերը գտնում է նաև, որ տվյալ դեպքում վերաքննիչ դատարանը խախտել է նաև ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածը: ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Այնինչ, առաջին ատյանի դատարանի կողմից ակնհայտ սխալ թույլ չի տված:

Վերոգրյալի հիման վրա, բողոքաբերը գտնում է, որ բավարար հիմքեր չկան վերաքննիչ դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի

1-ին կետի դրույթները կիրառելու և վճիռը բեկանելու համար, քանի որ առաջին ատյանի դատարանի կողմից թույլ չեն տրվել դատավարական իրավունքի նորմերի խախտում կամ սխալ կիրառում, որոնք կարող են հանգեցնել գործի սխալ լուծման:

Բողոքում նշվում է նաև, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված առերևույթ դատական սխալը կարող է առաջացնել իր համար ծանր հետևանքներ ու բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը խնդրել է ամբողջությամբ բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. հունիսի 07-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. ապրիլի 16-ի վճռին:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Համաձայն թիվ SQ014560 համարի տրանսպորտային միջոցի ժամանակավոր գրանցման վկայականի՝ «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 US 031 պետհամարանիշի ավտոմեքենան պատկանում է Արայիկ Արտեմի Գրիգորյանին.

2. Համաձայն թիվ SQ015456 համարի տրանսպորտային միջոցի ժամանակավոր գրանցման վկայականի՝ «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 PՈ 006 պետհամարանիշի ավտոմեքենան պատկանում է Արմեն Կամոյի Ղալայանին.

3. 2009թ. սեպտեմբերի 19-ին, ժամը 1545-ի սահմաններում պատասխանող Արմեն Ղալայանն իրեն պատկանող «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 PՈ 006 պետհամարանիշի ավտոմեքենայով Ստեփանակերտ քաղաքի Ադմ. Իսակով փողոցում բախվել է հայցվոր Արայիկ Գրիգորյանի «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 US 031 պետհամարանիշի ավտոմեքենային: Ավտովթարի հետևանքով երկու ավտոմեքենաներին պատճառվել է գույքային վնաս.

4. Համաձայն ԼՂՀ ոստիկանության ՃՈ ՃՊԾ վաշտի թիվ 1 սպայական դասակի ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Մ.Մուրադյանի կողմից 21.09.2009թ. կազմված եզրակացության, 2009թ. սեպտեմբերի 19-ին ժամը 15.45-ի սահմաններում «Մերսեդես-Բենց» մակնիշի 16US031 պետհամարանիշի և Մերսեդես-Բենց 90 PՈ 006 պետհամարանիշի ավտոմեքենաների միջև տեղի ունեցած ճանապարհային պատահարի պատճառ է հանդիսացել վերջինիս վարորդ Արմեն Ղալայանի կողմից համապատասխան հեռատարածությունը չպահպանելը, որի համար՝ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի և ԼՂՀ ճանապարհային երթևեկության կանոնների 62-րդ կետի պահանջները խախտելու համար վերջինս ենթարկվել է պատասխանատվության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 6-րդ մասի հատկանիշներով.

5. «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ն թիվ 03651008 առ 11.03.2010թ. փորձագետի եզրակացության «հետևություններ» մասի չորրորդ կետի առաջին պարբերության համաձայն՝ «եթե «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 US 031 հ/հ ավտոմոբիլը դրա վարորդի կողմից իրականացված ձախ շրջադարձի ժամանակ, կանգ է առել երթևեկելի ուղեմասի ձախ գոտում և մինչև ընդհարումը գտնվել է շուրջ 15 վայրկյան տևողությամբ կանգնած վիճակում, ապա այդ դեպքում «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 PՈ 006 հ/հ ավտոմոբիլի վարորդն իր առջև՝ իր երթևեկության ուղեմասում, կանգնած «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 US 031 հ/հ ավտոմոբիլը հայտնաբերելու հնարավորություն ունենալու պահից սկսած, երթևեկության անվտանգությունն ապահովելու և իր ավտոմոբիլի ու «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 US 031 հ/հ ավտոմոբիլի ընդհարումը կանխելու նպատակով, ղեկավարվելով ՃԵԿ-ի 67-րդ կետի պահանջով, տեխնիկական տեսակետից պետք է ժամանակին կատարված արգելակումով իր ավտոմոբիլի ընթացքը դանդաղեցնելու՝ ընդհուպ այն կանգնեցնելու միջոցով,

հնարավորություն տար «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 US 031 հ/հ ավտոմոբիլին դուրս գալու իր երթևեկության գոտուց, կամ էլ երթևեկության մյուս մասնակիցների համար անվտանգ ձևով շրջանցել «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 US 031 հ/հ ավտոմոբիլին: Տվյալ դեպքում «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 PՈ 006 հ/հ ավտոմոբիլի վարորդը ընդհարումը կանխելու տեխնիկական հնարավորություն ունեցել է: Տվյալ դեպքում «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 PՈ 006 հ/հ ավտոմոբիլի վարորդն իր երթևեկության ուղեմասում կանգնած և իր երթևեկության համար խոչընդոտ հանդիսացող «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 US 031 հ/հ ավտոմոբիլին հայտնաբերելու պահից սկսած ժամանակին չձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ իր ավտոմոբիլը կանգնեցնելու (կամ այդ ավտոմոբիլին անվտանգ շրջանցելու) համար՝ ուշացած դիմելով արգելակման, տեխնիկական տեսակետից թույլ է տվել ՃԵԿ-ի 67-րդ կետի պահանջին հակասող գործողություն և դրանով իսկ պայմանավորվել է տվյալ ընդհարման առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից»:

6. «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ն թիվ 03651008 առ 11.03.2010թ. փորձագետի եզրակացության «հետևություններ» մասի հինգերորդ կետի առաջին պարբերության համաձայն՝ «եթե «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 US 031 հ/հ ավտոմոբիլը՝ դրա վարորդի իրականացրած ձախ շրջադարձի ժամանակ, կանգ է առել երթևեկելի ուղեմասի ձախ գոտում և մինչև ընդհարումը գտնվել է շուրջ 15 վայրկյան տևողությամբ կանգնած վիճակում, ապա այդ դեպքում ընդհարման առաջացումը տեխնիկական տեսակետից պայմանավորված է եղել «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 PՈ 006 հ/հ ավտոմոբիլի վարորդի ՃԵԿ-ի 67-րդ կետի պահանջին անհամապատասխան գործելու հանգամանքով, ինչը տեխնիկական տեսակետից գտնվում է տվյալ ընդհարման առաջացման հետ անմիջական պատճառական կապի մեջ»:

7. Դատաապրանքագիտական փորձաքննության Հմ՝ 18016.09 առ 19.10.2009թ. եզրակացության համաձայն՝ «Մերսեդես-Բենց» մակնիշի, WDB 1240231B574749 նույնացման համարի ավտոմեքենայի վնասի չափը կազմում է 894.000 դրամ:

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքն ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝

1. չի կիրառել այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը պետք է կիրառեր.

2. կիրառել է այն օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը, որը չպետք է կիրառեր.

3. սխալ է մեկնաբանել օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը.

Նույն հոդվածի երկրորդ կետի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Նշված հոդվածների մեկնաբանությունից ուղղակիորեն հետևում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանը՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունների շրջանակներում, բեկանում է վերանայվող դատական

ակտը, և բավարարում է վճարել բողոքն այն դեպքում, երբ վճարել բողոքում նշված փաստարկներն էական են գործի ըստ էության ճիշտ լուծման համար, և երբ վերանայվող դատական ակտն անհիմն և անօրինական է, և կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի այնպիսի էական խախտումներով, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

Գործի նյութերով, մասնավորապես, Ա.Գրիգորյանի և Ա.Ղալայանի 19.9.2009թ. բացատրություններով /գ.թ.10,11/, ՃՈ վարչության աշխատակից Մ. Սուրադյանի կողմից նախապատրաստված նյութերով /գ.թ. 7-13/, հաստատված է, որ 2009թ. սեպտեմբերի 19-ին ժամը 1545-ի սահմաններում պատասխանող Արմեն Ղալայանն իրեն պատկանող «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 ՔՈ 006 պետհամարանիշի ավտոմեքենայով Ստեփանակերտ քաղաքի Ադմ. Իսակով փողոցով երթևեկելով, չպահպանելով համապատասխան հեռատարածությունն և քաղաքի է առջևից ընթացող և ձախ շրջադարձ կատարող Արայիկ Գրիգորյանի «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 ՍՏ 031 պետհամարանիշի ավտոմեքենային, որին պատճառվել է գույքային վնաս:

Գործում առկա /գ.թ. 104/ հանձնաժողովային փորձաքննության Հմ` 03651008 առ 11.3.2010թ. փորձագետների եզրակացության «հետևություններ» մասի չորրորդ կետի առաջին պարբերությունից հետևում է, որ եթե «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 ՍՏ 031 հ/հ ավտոմոբիլը` դրա վարորդի կողմից իրականացված ձախ շրջադարձի ժամանակ, կանգ է առել երթևեկելի ուղեմասի ձախ գոտում և մինչև ընդհարումը գտնվել է շուրջ 15 վայրկյան տևողությամբ կանգնած վիճակում, ապա այդ դեպքում «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 ՔՈ 006 հ/հ ավտոմոբիլի վարորդն իր առջև իր երթևեկության ուղեմասում, կանգնած «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 ՍՏ 031 հ/հ ավտոմոբիլին հայտնաբերելու հնարավորություն ունենալու պահից սկսած, երթևեկության անվտանգությունն ապահովելու և իր ավտոմոբիլի ու «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 ՍՏ 031 հ/հ ավտոմոբիլի ընդհարումը կանխելու նպատակով, ղեկավարվելով ՃԵԿ-ի 67 կետի պահանջով, տեխնիկական տեսակետից պետք է ժամանակին կատարված արգելակումով իր ավտոմոբիլի ընթացքը դանդաղեցնելու` ընդհուպ այն կանգնեցնելու միջոցով, հնարավորություն տար «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 ՍՏ 031 հ/հ ավտոմոբիլին դուրս գալու իր երթևեկության գոտուց, կամ էլ երթևեկության մյուս մասնակիցների համար անվտանգ ձևով շրջանցել կանգնած «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 ՍՏ 031 հ/հ ավտոմոբիլին: Տվյալ դեպքում «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 ՔՈ 006 հ/հ ավտոմոբիլի վարորդն ընդհարումը կանխելու տեխնիկական հնարավորություն ունեցել է: Տվյալ դեպքում «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 ՔՈ 006 հ/հ ավտոմոբիլի վարորդն իր երթևեկության ուղեմասում կանգնած և իր երթևեկության համար խոչընդոտ հանդիսացող «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 ՍՏ 031 հ/հ ավտոմոբիլին հայտնաբերելու պահից սկսած ժամանակին չձեռնարկելով անհրաժեշտ համապատասխան միջոցներ իր ավտոմոբիլը կանգնեցնելու (կամ այդ ավտոմոբիլին անվտանգ շրջանցելու) համար` ուշացած դիմելով արգելակման, տեխնիկական տեսակետից թույլ է տվել ՃԵԿ-ի 67 կետի պահանջին հակասող գործողություն և դրանով իսկ պայմանավորել տվյալ ընդհարման առաջացումն` ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից:

Նույն եզրակացության «հետևություններ» մասի հինգերորդ կետի առաջին պարբերությունից հետևում է, որ եթե «Մերսեդես-Բենց» մակնիշի 16 ՍՏ 031 հ/հ ավտոմոբիլը` դրա վարորդի կողմից իրականացված ձախ շրջադարձի ժամանակ, կանգ է առել երթևեկելի ուղեմասի ձախ գոտում և մինչև ընդհարումը գտնվել է շուրջ 15 վայրկյան տևողությամբ կանգնած վիճակում, ապա այդ դեպքում ընդհարման առաջացումը տեխնիկական տեսակետից պայմանավորված է եղել «Մերսեդես-Բենց» մակնիշի 90 ՔՈ 006 հ/հ ավտոմոբիլի վարորդի ՃԵԿ-ի 67 կետի պահանջին անհամապատասխան

գործելու հանգամանքով, ինչը տեխնիկական տեսակետից գտնվում է տվյալ ընդհարման առաջացման հետ անմիջական պատճառական կապի մեջ:

Վերը նշվածի հիման վրա, առաջին ատյանի դատարանը ճիշտ է եզրահանգել, որ պատասխանող Ա.Ղալայանի կողմից ներկայացրած պատասխանում նշված առարկումները և դատաքննության ընթացքում տված ցուցմունքները մտածացին են, չեն բխում գործի նյութերից, և նման դիրքորոշում ընտրելը կապված է նրա կողմից պատասխատվությունից խուսափելու հետ ու ստուգման ենթարկելով պատասխանող Արմեն Ղալայանի ցուցմունքի արժանահավատությունը, եկել է ճիշտ հետևության, որ դրանք հակասում են գործում առկա ԼՂՀ Ոստիկանության ՃՈ վարչության աշխատակից Մուրադ Մուրադյանի 2009 թվականի սեպտեմբերի 21-ին կազմած եզրակացությունը, դատաքննության ընթացքում տված նրա ցուցմունքներին և 2009 թվականի սեպտեմբերի 19-ին տրված իր իսկ բացատրությանը:

Սույն գործով հաստատված փաստերի հիման վրա ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ առաջին ատյանի դատարանի հետևությունները հիմնված են գործում առկա այն ապացույցների հետազոտման և գնահատման վրա, որոնք բավարար են եղել գործի ըստ էության ճիշտ լուծման համար, իսկ վերաքննիչ բողոքում բերված փաստարկները գործի ըստ էության ճիշտ լուծման համար էական նշանակություն չեն ունեցել, ուստի հիմքեր չեն եղել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով ԼՂՀ առաջին ատյանի դատարանի վճիռը վերաքննիչ դատարանի կողմից բեկանելու համար:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, և ելնելով արդարադատության արդյունավետության շահերից, ԼՂՀ Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով սահմանված լիազորության ուժով՝ վճռաբեկ բողոքը պետք է բավարարել, իսկ վերանայվող դատական ակտը ամբողջությամբ բեկանել՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, ԼՂՀ Գերագույն դատարանը

## **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

1.Արայիկ Արսյունի Գրիգորյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010 թվականի հունիսի 07-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /վարչական/ դատարանի 2010 թվականի ապրիլի 16-ի վճռին:

2.Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Կ.ՂԱՐԱՅԱՆ**

**Զ. ՕՀԱՆՅԱՆ**